ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Նիզամու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու (28 դասաժամ), կերպարվեստ (3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցակացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային

գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5) ,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր

(առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
-Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր առեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակներ համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված

փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող էմինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել այն:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 17-ից մինչև սեպտեմբերի 30- ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 3- ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Նիզամու միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նիզամի, Ա.Եղիազարյան 37:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)57-05-06 հեռախոսահամարով: